

**ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՍԵՐԳԵՅ ՄԱՐԱԲՅԱՆ

Դատական համակարգի կազմակերպական առանձնահատկությունները, մասնավորապես՝ բազմաստիճանությունը և միևնույն օղակի դատարանների մեծաքանակությունն անհրաժեշտություն են առաջացնում դատավարական օրենսգրքերում ամրագրելու այնպիսի նորմեր, որոնք հնարավորություն կտան լուծելու այն հարցերը, թե կոնկրետ գործը որ դատարանը պետք է քննի և լուծի, որպեսզի այն համապատասխանի «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» (օրինական դատարան) հայեցակարգին¹: Հայեցակարգ, որը, լինելով ամրագրված միջազգային իրավական ակտերում (ՄԻԵԿ 6-րդ հոդված, ՔՔԻՄԴ 14-րդ հոդված), անձի արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքի ինստիտուցիոնալ տարր է², որի սահմանումը և երաշխավորումը, որպես հիմնարար իրավական արժեք, պետության պոզիտիվ պարտավորությունն է³: Գործի քննությունն իրականացնել «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» (օրինական դատարան) կողմից նշանակում է, մասնավորապես, որ քրեական գործը պետք է քննի և լուծի օրենքով հստակ սահմանված կանոններին համապատասխան որոշված դատարանը, որպեսզի բացառվեն կամայականությունները գործը վարույթ ընդունելիս և երաշխավորվեն դատարանի մատչելիության ու արդար դատաքննության անձի իրավունքները⁴: Հակառակ դեպքում դատարանը, որն օրենքով լիազորված չէ քննելու կոնկրետ գործը, այլ որոշվել է կամայականորեն, չի կարող համարվել «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» (օրինական դատարան), իսկ այն դատական ակտը, որը դատարանը կայացնում է պետության անունից և ունի համապարտադիր բնույթ, չի կա-

¹ Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն, հատուկ մաս, դասագիրք, 4-րդ հրատարակություն, Եր., 2019, էջ 370-371:

² 03.02.2009 ՄԴՈ-787 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է հանդիսանում անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատության օրենքով հանձնված է տվյալ գործը: (...)»:

³ Այս մասին տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի ԵԿԴ/0211/01/10 որոշումը:

⁴ Այս մասին տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի ԾԴ/0007/15/12 որոշումը:

րող ճանաչվել օրինական և անձի իրավունքների ու ազատությունների իրական երաշխավորող: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ «ընդդատության ինստիտուտն է» կոչված լուծելու կոնկրետ գործը քննելու համար «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» որոշման հարցը, որը, սակայն, օրենսդրական ոչ պատշաճ կարգավորումների, բացերի և տերմինաբանական խառնաշփոթի պատճառով առաջացնում է մեթոդաբանական բնույթի մի շարք հարցեր և գործնականում հանգեցնում ընդդատության ինստիտուտի կողմից իր առջև դրված խնդիրների լուծման բարդությունների:

Նախևառաջ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային մեկնաբանությունը և վերլուծությունը ցույց են տալիս, որ ինչպես «Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները» վերնագիրը կրող 6-րդ հոդվածում, այնպես էլ «Քրեական գործերի ընդդատությունը» վերտառությամբ 6-րդ գլխում ընդգրկված նորմերում տրված չէ «ընդդատություն» հասկացության սահմանումը, ընդ որում՝ թեև օրենսդիրը այդ նույն նորմերում կարգավորել է ընդդատության տարբեր կողմերին նվիրված հարցերը, սակայն դրանց վերլուծությունից ևս հնարավոր չէ հետևություն անել, թե օրենսդիրն ինչ իմաստ է հաղորդել «ընդդատություն» եզրույթին: Քրեական գործի ընդդատությունը որոշելու համար մի դեպքում հիմք են ընդունվում հանցանքի կատարման **տարածքի** կամ մինչդասական վարույթի ավարտման **վայրի** կամ ամբաստանյալի **բնակության վայրի** (օրինակ՝ այլ պետության տարածքում հանցանք կատարած անձի դեպքում նրա վերջին բնակության վայրը, մեղադրյալների կամ վկաներից շատերի գտնվելու վայրը և այլն) հատկանիշները, իսկ մյուս դեպքում՝ այն, թե ինչ գործեր են քննում համապատասխանաբար առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանները: Ավելին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44, 45 և 46 հոդվածներում տրված՝ «Առաջին ատյանի դատարանների ընդդատությունը»⁵, «Վերաքննիչ դատարանի ընդդատությունը»⁶ և «Վճռաբեկ դատարանի ընդդատությունը»⁷ հասկացությունների բովանդակային վերլուծությունից և «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Դատական օրենսգիրք) 20, 21, 27 և 29 հոդվածներում տրված՝ «Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի իրավասությունը»,

⁵ «Առաջին ատյանի դատարանները քննում են բոլոր քրեական գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ»:

⁶ «Քրեական վերաքննիչ դատարանին ընդդատյա են առաջին ատյանի դատարանների՝ օրինական ուժի մեջ չմտած, իսկ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված բազառիկ դեպքերում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին վերաբերող գործերը»:

⁷ «Վճռաբեկ դատարանի քրեական պալատին ընդդատյա են՝ վերաքննիչ դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի վերաբերյալ գործերը, իսկ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված բազառիկ դեպքերում՝ նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին վերաբերող գործերը»:

«Առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանում դատավորների մասնագիտացումը», «Վերաքննիչ դատարանի իրավասությունը» և «Վճռաբեկ դատարանի իրավասությունը» հասկացությունների⁸ հետ համադրումից պարզ է դառնում, որ օրենսդիրը դրանք (ընդդատությունը և դատարանի իրավասությունը) ըստ էության նույնացրել է: Այլ կերպ ասած՝ Դատական օրենսգրքում տրված առաջին աստյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների «իրավասությունը» և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տրված այդ դատարանների «ընդդատությունը» հասկացությունները բովանդակությամբ և ծավալով համընկնում են, ինչը, մեր կարծիքով, մեթոդաբանական առումով խնդրահարույց է, քանի որ դրանք, լինելով ինքնուրույն իրավական հասկացություններ և կոչված լինելով լուծելու իրավական տարբեր խնդիրներ, չեն կարող նույնացվել⁹: Այդ հասկացությունների նույնացումը հակասում է տրամաբանական մտածողության նույնության օրենքին և իրավական որոշակիության սկզբունքին, որոնց տեսանկյունից ամեն մի հասկացություն պետք է օգտագործվի ստույգ, որոշակի իմաստով. արգելվում է դատելու պրոցեսում մի հասկացությունը փոխարինել մի այլ հասկացությամբ, մի դատողությունը փոխարինել մեկ այլ դատողությամբ՝ և դրանով իսկ խախտել մտքերի որոշակիությունը¹⁰:

Հետևաբար, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ցանկացած տեսության մեջ հասկացության մշակումով և սահմանումով է սկսվում հետազոտվող օբյեկտի գիտական ճանաչումը¹¹, ուստի որպեսզի հնարավոր լինի հստակեցնել և միմյանցից տարբերակել «դատարանի իրավասություն» և «ընդդատություն» հասկացությունները, այնուհետև դրան համապատասխան անդրադառնալ ՀՀ դատարանակազմության պայմաններում ընդդատության հարցերի առավել հստակ կարգավորմանը ՀՀ քրեական դատավարությունում, անհրաժեշտ է նախնառաջ անդրադառնալ «դատարանի իրավասություն» և «ընդդատություն» հասկացությունների էության բացահայտման, դրանց հատկանիշների թվարկման և դրան համապատասխան դրանց սահմանումների ձևա-

⁸ Այս հոդվածներում տրված հասկացություններին դեռ կանոնադառնանք:

⁹ Այս առումով ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ առաջին աստյանի դատարանի, վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի ընդդատություն հասկացությունը նույնական է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում տրված այդ դատարանների հասկացությանը, մասնավորապես 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերի սահմանումներին, որն անընդունելի է նաև «Նորմատիվ իրավական ակտերի» մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի տեսանկյունից, որի համաձայն նույն նորմատիվ իրավական ակտում անթույլատրելի է միևնույն սահմանումը օգտագործել տարբեր իմաստներով, միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն նույն բառերը, տերմինները, հասկացությունները:

¹⁰ Ըստ նույնության օրենքի՝ ամեն մի հասկացություն պրոցեսում մի հասկացությունը փոխարինել մի այլ հասկացությամբ, մի դատողությունը փոխարինել մեկ այլ դատողությամբ և դրանով իսկ խախտել մտքերի որոշակիությունը // տե՛ս **Գ. Ա. Բրուտյան**, Ձևական տրամաբանության դասընթաց, Երկրորդ վերամշակված և լրացված հրատարակություն, Եր., 1967, էջ 256:

¹¹ Տե՛ս Теория определения. М., 1982, էջ 12:

կերպման և փոխհարաբերակցության հարցերին:

Հասկացությունը մտքի այնպիսի ձև է, որն արտացոլում է տվյալ առարկայի կամ առարկաների դասի այն ընդհանուր և էական հատկություններն ու հարաբերությունները, որոնք անհրաժեշտ են և բավարար այդ առարկան (առարկաների խումբը) մյուս բոլոր առարկաներից տարբերելու համար¹²: Յուրաքանչյուր հասկացություն ունի իր բովանդակությունն ու ծավալը: Հասկացության բովանդակությունը հասկացության մեջ արտացոլված առարկայի (առարկաների) հատկությունների և հարաբերությունների ամբողջությունն է: Նշել հասկացության բովանդակությունը նշանակում է թվարկել տվյալ հասկացության մեջ արտացոլված հատկություններն ու հարաբերությունները¹³: Ցանկացած հասկացության բովանդակություն բացահայտվում է սահմանման միջոցով, որը թվարկում է հասկացության մեջ արտացոլված առարկայի էական հատկությունները՝ մատնանշելով այն հատկությունները, որոնցով տվյալ հասկացության մեջ արտացոլված առարկան տարբերվում է մյուս առարկաներից¹⁴:

Տրամաբանական մտածողության այս ընդհանուր կանոններից բացառություն չեն նաև «դաստարանի իրավասություն» և «ընդդաստություն» հասկացությունները, որոնց էությունը բացահայտելու համար ևս անհրաժեշտ է թվարկել այն էական հատկությունները, որոնք բնութագրական են այդ հասկացություններից յուրաքանչյուրին, և որոնց շնորհիվ այդ հասկացությունները տարբերվում են իրարից և համասեռ այլ հասկացություններից:

«Իրավասություն» լեզվական իմաստով նշանակում է՝ (1) լիազորությունների շրջանակ և (2) իրեն ենթակա՝ իր քննությանն ու տնօրինությանը պատկանող հարցերի ամբողջություն¹⁵:

«Իրավասություն» եզրույթի բովանդակության վերլուծությունից պարզ է դառնում, որ այն ունի երկու բաղադրիչ՝ «ենթակայությունը» և «լիազորությունների շրջանակը», որոնք թեև նույն եզրույթի բովանդակությունը բացահայտում են տարբեր կողմերից, սակայն իրավական առումով փոխկապված և փոխլրացնող հասկացություններ են և որպես հանրային իրավունքի հասկացության (իրավասության) բաղադրիչներ բնութագրական են բոլոր պետական ինստիտուտներին ու մարմիններին¹⁶ (Նախագահ, Կառավարություն, նախարարություն, դատախազութ-

¹² Տե՛ս **Գ. Ա. Բրուսյան**, նշվ. աշխ., էջ 59:

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 84-85:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 109-110:

¹⁵ Տե՛ս **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Եր., 1976, էջ 508:

¹⁶ Հարկ է նկատել, որ դրանց քննարկումն անիմաստ է առանց կոնկրետ սուբյեկտը մատնանշելու, քանի որ ինչպես լիազորությունների շրջանակը, այնպես էլ ենթակայությունը պետք են, և ըստ «իրավասություն» հասկացության՝ վերաբերում են ինչ-որ սուբյեկտի, այսինքն՝ առանց սուբյեկտի խոսք լինել չի կարող ոչ չ ենթակայության, ոչ էլ լիազորությունների շրջանակի մասին:

յուն, ոստիկանություն և այլն), այդ թվում՝ դատական իշխանությանն ու դատարաններին, և դրանց միջոցով լուծվում են ինստիտուցիոնալ և համակարգային խնդիրներ, մասնավորապես՝ տարանջատվում են պետական տարբեր ինստիտուտների և մարմինների գործունեության առարկան (գործերի ենթակայությունը այդ ինստիտուտներին և մարմիններին) ու լիազորությունների շրջանակը և դրանով իսկ՝ յուրաքանչյուրի տեղն ու դերը պետական իշխանության մարմինների համակարգում:

Մակայն պետք է նկատել, որ դատական իշխանության և դատարանների առումով «իրավասություն» հասկացությունն ունի առանձնահատկություն, քանի որ դատական իշխանության կառուցվածքը բարդ է (*առաջին աստյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններ, առաջին աստյանի դատարանների մեծաքանակություն, մասնագիտացված առաջին աստյանի և վերաքննիչ դատարաններ*) և իր առջև դրված գործառույթներն իրականացնում է տարբեր տեսակի դատավարությունների շրջանակներում, իսկ դա նշանակում է, որ «իրավասություն» հասկացության շնորհիվ տարանջատվում են ինչպես դատական իշխանության գործունեության առարկան (ընդհանրապես դատական ենթակայությունը) և լիազորությունների շրջանակը իշխանության այլ ճյուղերի գործունեության առարկայից (այլ մարմիններին և ինստիտուտներին գործերի ենթակայությունից) ու լիազորությունների շրջանակից, այնպես էլ այդ համակարգի մեջ մտնող (ներհամակարգային) տարբեր դատարանների (ուղղահայաց և հորիզոնական) գործունեության առարկան (առարկայական դատական ենթակայությունը) և լիազորությունների շրջանակը տարբեր տեսակի դատավարություններում, այսինքն՝ այն լուծում է նաև ներհամակարգային մի շարք խնդիրներ:

Ըստ այդմ՝ **«իրեն ենթակա՝ իր քննությանն ու տնօրինությանը պատկանող հարցերի ամբողջությունը»** կամ **«ենթակայությունը»** ցույց է տալիս դատարանի իրավասության դատարանակազմական կողմը, այսինքն՝ դատարանի կարգավիճակից (առաջին աստյանի (մասնագիտացված և ընդհանուր իրավասության), վերաքննիչ և վճռաբեկ) բխող գործունեության առարկան (գործերի ենթակայությունը), մասնավորապես այն, թե դատարաններին (դատական իշխանությանը) ինչպիսի հարցերի քննարկում և լուծում է վերապահված (ընդհանուր դատական ենթակայությունը կամ դատական կարգով քննության ենթակա գործերի խումբը)՝ ընդհանրապես և կոնկրետ դատարաններին (ուղղահայաց և հորիզոնական)՝ մասնավորապես (առարկայական դատական ենթակայությունը կամ քննության ենթակա գործերի ենթախումբը), որոնցով տարբերակվում է նաև տարբեր դատավարություններում տարբեր ատյանի դատարանների գործունեության առարկան: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր պետության մեջ կազմավորվում (ստեղծվում) է տարբեր բնույթի իրավական վեճեր լուծելու իրավունքով օժտված դատարանների համակարգ, որը, որպես հետևանք, պահանջում է տարանջատել այդ

համակարգի մեջ մտնող յուրաքանչյուր դատարանի գործունեության առարկան, որպիսի գործառույթն էլ իրականացնում է հենց «իրավասություն» հասկացության «ենթակայություն» բաղադրիչը: Այն, փաստորեն, դատական համակարգի գործունեությունն իրավական կարգավորման ենթարկելիս խաղում է բաշխիչ (համակարգող) մեխանիզմի (ներքին կառուցվածքի) դեր, որի օգնությամբ լուծվում են դատական համակարգի մեջ մտնող դատարանի կարգավիճակից (առաջին ատյանի (մասնագիտացված և ընդհանուր իրավասության), վերաքննիչ և վճռաբեկ) բխող գործունեության առարկան: Այդ մեխանիզմի գործողությունն ապահովվում է Սահմանադրությամբ և օրենքներով որոշակի չափանիշների սահմանմամբ, որոնցով պայմանավորված՝ կոնկրետ գործերը հանձնվում են Սահմանադրությամբ և օրենքով որոշված դատական իշխանության համապատասխան մարմինների լուծմանը:

Ինչ վերաբերում է «իրավասություն» հասկացության՝ **«լիազորությունների շրջանակը»** բաղադրիչին, ապա այն առավելապես բնութագրում է դատարանի իրավասության դատավարական կողմը, մասնավորապես այն, թե կոնկրետ տեսակի (քրեական, քաղաքացիական, վարչական) դատավարության շրջանակներում ինչ լիազորություններով է օժտված դատարանն իր կարգավիճակից (առաջին ատյանի (մասնագիտացված և ընդհանուր իրավասության), վերաքննիչ և վճռաբեկ) բխող իրեն ենթակա այս կամ այն դատական գործը քննելիս և լուծելիս: Ընդ որում, հանրային իրավունքում լիազորությունը համապատասխան սուբյեկտի իրավունքն է և միևնույն ժամանակ պարտականությունը՝ որոշակի իրավիճակում գործելու օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանված կարգով¹⁷:

Մեր վերոնշյալ դիտարկումները համահունչ են ՀՀ Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով սահմանված՝ դատարանների (առաջին ատյանի (մասնագիտացված և ընդհանուր իրավասության), վերաքննիչ, վճռաբեկ և սահմանադրական) «իրավասություն» հասկացությանը հաղորդած իմաստին և դատավարական օրենսգրքերում սահմանված՝ դատարանների (առաջին ատյանի (մասնագիտացված և ընդհանուր իրավասության), վերաքննիչ և վճռաբեկ) լիազորություններին (իրավունքներին ու միաժամանակ պարտականություններին):

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է, որ ՀՀ-ում պետական իշխանությունն իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա (ՀՀ Սահմ. հոդված 4-րդ), որոնք, լինելով պետական միասնական իշխանության առանձին ճյուղեր, ունեն իրենց գործառույթները և գործում են ինքնուրույն, որին համապատասխան Սահմանադրությամբ ձևավորվում են անհրաժեշտ ինստիտուտներ՝ իշխանության մարմիններ, որոնք

¹⁷ См. у Тихомиров М. Ю. Теория компетенции. М., 2001, էջ 53:

սահմանադրորեն օժտվում են համարժեք իրավասություններով այդ գործառույթներն իրականացնելու համար և լիազորված են կատարելու միայն Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված գործողություններ (ՀՀ Սահմ. հոդված 6-րդ, մաս 1-ին)¹⁸: Մեր այս հետևությունը բխում է ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թ. հոկտեմբերի 14-ի թիվ ՄԴՈ-766 որոշման մեջ ձևավորված այն դիրքորոշումներից, որ իշխանությունների բաժանումը (տարանջատումը) ու հավասարակշռումը իրականացվում են իշխանության գործառական բնույթից ելնելով, որին համապատասխան էլ պետական իշխանությունն իրականացվում է **«գործառույթ-ինստիտուտ-իրավասություն»** եռամիասնական սահմանադրական ներդաշնակության հիման վրա: Այդ եռամիասնության մեջ **ինստիտուտն** ու **իրավասությունը** միջոց են **գործառույթն** իրականացնելու համար, որը ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների հիման վրա տեղի է ունենում Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված կառուցակարգերի, կոնկրետ լիազորությունների, ձևերի ու մեթոդների շրջանակներում, որոնց արդյունքում երաշխավորվում են պետության ողջ տարածքում հասարակական հարաբերությունների կանոնակարգումը (համապարտադիր վարքագծի կանոնների սահմանումը) և դրանց իրացման ապահովումը: Դրանցից դուրս իրականացվող գործողությունները ճանաչվում են հակաիրավական¹⁹:

Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության՝ որպես պետական իշխանության առանձին և ինքնուրույն ճյուղի՝ Սահմանադրությամբ ամրագրված **գործառույթներն** են **«արդարադատությունը և անձի իրավունքների դատական պաշտպանությունը»** (ՀՀ Սահմ. հոդվածներ 61, 63 և 162), որոնց իրականացումը դրված է սահմանադրական այնպիսի **ինստիտուտի վրա**, ինչպիսին դատարանների համակարգն է (ՀՀ Սահմ. 162-րդ հոդված, մաս 1-ին), մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը (ՀՀ Սահմ. 167-րդ հոդված), Վճռաբեկ դատարանը (ՀՀ Սահմ. 171-րդ հոդված), Վերաքննիչ դատարանները (ՀՀ Սահմ. 172-րդ հոդված), առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանները և վարչական դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ մասնագիտացված դատարանները (ՀՀ Սահմ. 163-րդ հոդված): Ընդ որում, հիմք ընդունելով դատական իշխանության վերաբերյալ «իրավասություն» հասկացության դատարանակազմական առանձնահատկությունները, ՀՀ Սահմանադրությունը միաժամանակ սահմանում է, որ ՀՀ սահմանադրական դատարանն իրականացնում է սահմանադրական արդարադատություն՝ ապահովելով

¹⁸ Այլ կերպ ասած՝ թեև պետական իշխանությունը միասնական է, բայց դրա գործառույթները *«հասարակական հարաբերությունների օրենսդրորեն կանոնակարգում», «կառավարում»* և *«արդարադատություն (դատական պաշտպանություն)»*, իրականացնում են տարբեր ինստիտուտներ և մարմիններ՝ Սահմանադրությամբ և օրենքներով օժտվելով համարժեք լիազորություններով:

¹⁹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թ. հոկտեմբերի 14-ի ՄԴՈ-766 որոշումը:

Մահմանադրության գերակայությունը²⁰ (հոդված 167), Վճռաբեկ դատարանը ՀՀ բարձրագույն դատական ատյանն է, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, որը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝ 1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, 2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները (հոդված 171), իսկ Վերաքննիչ դատարաններն առաջին ատյանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական ատյան են (հոդված 172):

Կոնկրետացնելով ՀՀ Մահմանադրության վերոնշյալ պահանջները՝ օրենսդիրը Դատական օրենսգրքով սահմանել է այն չափանիշները, որոնցով փորձել է²¹ տարանջատել դատական իշխանության համակարգի մեջ մտնող յուրաքանչյուր դատարանի²² կարգավիճակից

²⁰ ՀՀ Մահմանադրության 168-րդ հոդվածը սահմանում է, որ Մահմանադրական դատարանը Մահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով 1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, եկթօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Մահմանադրությանը, 2) մինչև Մահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը որոշում է դրանց համապատասխանությունը Մահմանադրությանը, 3) մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Մահմանադրությանը, 4) լուծում է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը, 5) լուծում է հանրաքվեի, Ազգային ժողովի և Հանրապետության նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը, 6) որոշում է կայացնում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցի վերաբերյալ, 7) եզրակացություն է տալիս Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին, 8) որոշում է կայացնում Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին, 9) լուծում է Մահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, 10) լուծում է Մահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցը, 11) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Մահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը, 12) օրենքով սահմանված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ:

²¹ Մեր կասկածը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդիրն այն չի հաջողվել լիարժեք ու ամբողջական իրականացնել: Այս առումով ուշագրավ է հատկապես ՀՀ սահմանադրական դատարանի 22 հունվարի 2019 թվականի ՄԴՌ-1439 որոշումը. «(...) մինչև Ազգային ժողովի կողմից սույն որոշմամբ արտահայտված առկա համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից, «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, քանի դեռ պատժի կատարման հետ կապված կոնկրետ գործի, նյութի կամ հարցի քննության իրավասությունն օրենքով հստակ վերապահված չէ քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանին (...):»

²² Այստեղ չենք անդրադառնում ՀՀ սահմանադրական դատարանի գործունեությանը, քանի որ մեր խնդիրը քրեադատավարական ընդդատության ինստիտուտի քննարկումն է:

(առաջին ատյանի (մասնագիտացված և ընդհանուր իրավասության), վերաքննիչ և վճռաբեկ) բխող գործունեության առարկան (գործերի ենթակայությունը), իսկ դատավարական օրենսգրքերում (քրեական, քաղաքացիական, վարչական) այն լիազորությունները, որոնցով օժտված են դատարանները (առաջին ատյանի (մասնագիտացված և ընդհանուր իրավասության), վերաքննիչ և վճռաբեկ) կոնկրետ դեպքում՝ Սահմանադրությամբ ամրագրված «արդարադատության և դատական պաշտպանության գործառույթն» իրականացնելու հարցում:

Այսպես, Դատական օրենսգրքի 20-րդ հոդվածում օրենսդիրը սահմանում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի, իսկ արդեն Դատական օրենսգրքի 21, 27 և 29 հոդվածներում ամրագրում է, որ (1) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում գործը քննում են քաղաքացիական կամ քրեական մասնագիտացման դատավորները, քրեական գործերը, մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված օրենքով նախատեսված գործերը քննում է միայն քրեական մասնագիտացման դատավորը, իսկ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի իրավասությանը ենթակա մյուս գործերը քննում է քաղաքացիական մասնագիտացման դատավորը, (2) վերաքննիչ դատարանն օրենքով սահմանված լիազորությունների սահմաններում վերանայում է առաջին ատյանի դատարանների՝ բողոքարկման ենթակա դատական ակտերը, իսկ (3) վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի, նաև օրենքով նախատեսված դեպքերում՝ իր կայացրած դատական ակտերը:

Այսպիսով՝ Դատական օրենսգրքի վերլուծությունից հետևում է, որ «դատարանի իրավասություն» հասկացության գործածմամբ օրենսդիրը տարանջատել է «արդարադատության և դատական պաշտպանության գործառույթն» իրականացնող տարբեր դատարանների կարգավիճակից (առաջին ատյանի (մասնագիտացված և ընդհանուր իրավասության), վերաքննիչ և վճռաբեկ) բխող քննությանը ենթակա գործերի շրջանակը (գործերի ենթակայությունը) և դրանով հստակեցրել յուրաքանչյուր դատարանի տեղն ու դերը դատարանների համակարգում (ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց) և իրավական հիմք ստեղծել այդ տեղից ու դերից բխող դատավարական լիազորությունների սահմանման համար: Հետևաբար, ակնհայտ է, որ «դատարանի իրավասություն» դատարանակազմական հասկացության էությունը բնութագրող հատկանիշներով (գործերի ենթակայությունը կամ դատական կարգով քննության ենթակա գործերի խումբը և/կամ ենթախումբը) չի կարող բնորոշվել «ընդդատություն» հասկացությունը, ինչպես արված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, էրբ 44, 45 և 46 հոդվածներ:

րում՝ առաջին ատյանի դատարանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների ընդդատությունը սահմանելիս հիմք է ընդունվել այն հատկանիշը, թե ինչ գործեր են քննույմ այդ դատարանները, քանի որ դրանով փաստացի ընդդատությունը նույնացվել է դատարանի իրավասությանը²³:

Ընդդատությունը, լինելով դատավարական հասկացություն, կոչված է լուծելու ավելի կոնկրետ խնդիրներ, քան «իրավասություն» հասկացության լուծելիք խնդիրներն են, ուստի, այդ հանգամանքի հաշվառմամբ, «ընդդատություն» հասկացությունը բնորոշելու համար պետք է հիմք ընդունվեն այլ՝ հենց «ընդդատության» էությունը բնութագրող հատկանիշներ. անընդունելի է դրանցից (իրավասության և ընդդատության) մեկի օգտագործումը մյուսի փոխարեն կամ մեկի (իրավասության) հատկանիշների միջոցով մյուսի (ընդդատության) սահմանումը տալը:

Լեզվական իմաստով **«ընդդատություն»** ասելով հասկացվում է **տվյալ դատական ատյանի վարույթին ենթակա, ենթադատ²⁴**, ինչը նշանակում է, որ այն ունի նեղ բովանդակություն, քան իրավասությունը և, ի տարբերություն վերջինիս, լուծում է կոնկրետ դատական ատյանին կոնկրետ գործի, այլ ոչ թե գործերի խմբի և/կամ ենթախմբի (քրեական գործերի) ենթակայության հարցը: Ասվածից էլ հետևում է, որ ընդդատության էությունը բացահայտելու համար պետք է հիմք ընդունվեն փոխկապված և փոխլրացնող երկու խումբ հատկանիշներ, որոնք բնորոշ են ինչպես կոնկրետ գործին, այնպես էլ կոնկրետ դատական ատյանին²⁵: Դա էլ իր հերթին ենթադրում է, որ **«ընդդատություն»** հասկացությունը ճիշտ մեկնաբանելու համար կարևոր նշանակություն ունի ինչպես կոնկրետ գործին բնորոշ հատկանիշների պարզաբանումը, այնպես էլ այն հանգամանքի պարզաբանումը, թե ինչ հատկանիշով²⁶ են որոշվում դատական համակարգի մեջ մտնող դատարանների (ուղղահայաց և հորիզոնական) կողմից կոնկրետ գործի քննության իրավունքն ու պարտականությունը (**գործի ըստ էության քննությունը, վերանայումը, վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ, դատական ակտերի կատարման փուլում ծագող հարցերի լուծումը և այլն**):

²³ Այս առումով ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ առաջին ատյանի դատարանի, վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի «ընդդատություն» հասկացությունը նույնական է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում տրված այդ դատարանների հասկացությանը, մասնավորապես՝ 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերում տրված սահմանումներին, որն անընդունելի է նաև «Նորմատիվ իրավական ակտերի» մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի տեսանկյունից, որի համաձայն՝ նույն նորմատիվ իրավական ակտում անթույլատրելի է միևնույն սահմանումը օգտագործել տարբեր իմաստներով, միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն նույն բառերը, տերմինները, հասկացությունները:

²⁴ Տե՛ս **Էդ. Աղայան**, նշվ. աշխ.:

²⁵ Բացի այդ, «ընդդատություն» հասկացությունը, ի տարբերություն իրավասության, լուծում է նաև գործը քննելու իրավունքն ու պարտականությունն ունեցող դատական կազմի հարցը, քանի որ ոչ միայն դատարանը, այլև դատավորը պետք է լինեն օրենքի հիման վրա ստեղծված: Այսինքն՝ անձը ունի օրենքի հիման վրա ստեղծված դատարանի և դատավորի իրավունք, որը պետք է քննի իր իրավունքների վերաբերյալ գործը:

²⁶ Արդարադատության և դատական պաշտպանության գործառնությունի համատեքստում:

Նշենք, որ տեսության մեջ նույնպես հանդիպում են ընդդատության հասկացությունը կոնկրետ դատական ատյանի և կոնկրետ գործի հատկանիշներով բացահայտող մեկնաբանություններ, սակայն այն վերապահումով, որ երբ խոսվում է դատական ատյանի հատկանիշի մասին, նշվում է, որ ընդդատությունը բնութագրական է գործը հենց առաջին ատյանի կարգով քննելուն, իսկ վերանայման վարույթներին այն բնորոշ հասկացությունն չէ: Այլ կերպ ասած՝ տեսության մեջ համընդհանուր ճանաչում ունի այն մոտեցումը, որ ընդդատությունը քրեական գործի այնպիսի հատկանիշների ամբողջություն է, որոնք էլ որոշում են կոնկրետ գործն առաջին ատյանի կարգով քննելու իրավունքն ու պարտականությունը²⁷, իսկ վերանայման և նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով վարույթներին «ընդդատություն» հասկացությունը վերաբերելի չէ²⁸, ընդ որում, թեև չի մասնավորեցվում, թե ինչու վերանայման վարույթներին ընդդատությունը վերաբերելի հասկացությունն չէ, երբ այդ ինստիտուտի միջոցով որոշվում է բացառապես առաջին ատյանի կարգով քննության վարույթը, սակայն հիմնական գաղափարը, որը կարելի է բխեցնել նման մեկնաբանություններից, այն է, որ ընդդատությունը պետք է վերաբերի գործն ըստ էության քննելուն ու լուծելուն, որի իրավունքն ու պարտականությունը կրում են հենց առաջին ատյանի դատարանները, ուստի սկզբունքային է հենց այդ ատյանի դատարանի ճիշտ որոշման չափանիշների սահմանումը օրենսդրորեն: Մնացած ատյանների կամ վարույթների հիմքում ընկած է գործունեության այլ չափանիշ, այն է՝ այդ դատարանների կողմից իրականացվող դատավարական գործառույթը՝ վերանայում, գործերի նորոգում, հսկողություն և այլն, ուստի դրանց որոշման նկատմամբ ընդդատությունը կիրառելի հասկացությունն չէ. դրանք լուծվում են իրավասության հասկացության միջոցով:

Դատական ատյանի հատկանիշով պայմանավորված ընդդատությունը միայն առաջին ատյանի դատարանին բնորոշ լինելու հանգամանքը բնութագրական է նաև ՀՀ դատարանակազմությանը:

ՀՀ Սահմանադրությունից հետևում է, որ «օրինական դատարանի» կողմից իր գործի քննության իրավունքը (հոդվածներ 61 և 63) և իր նկատմամբ կայացված դատական ակտի վերանայման իրավունքը (հոդվածներ 68 և 69) անձին երաշխավորված ինքնուրույն սահմանադրական իրավունքներ են, որոնք, մեր խորին համոզմամբ, իրենց ազդեցությունն են ունենում ինչպես դատարանակազմության, այնպես էլ դատավարական գործառույթների վրա: Դա նախևառաջ ենթադրում է, որ պետք է առկա լինեն առնվազն «գործի քննության վարույթ» և դրա արդ-

²⁷ Տե՛ս **Порцева О. Б.** Подсудность уголовных дел: автореф. дисс... канд. юрид. наук. Ижевск, 2004, **Угренинова А. М.**, Подсудность в уголовном процессе: дисс. на соискание канд. юридич. наук., Екатеринбург, 2018, էջ 39 և այլն:

²⁸ Տե՛ս օրինակ, **Соловьев В., Громов Н., Смишин В.** Подсудность, ее признаки и значение // Рос. юстиция. 1995, 10, էջ 25, **Павловец Г. А.** Подсудность и ее признаки // <https://elib.institutemvd.by/bitstream> և այլն:

յունքում կայացված դատական ակտերի «վերանայման վարույթ», ապահովելու համար անձի բողոքարկման իրավունքի իրացումը և դրան համապատասխան՝ գործն ըստ էության քննություն իրականացնող դատարան և վերանայող դատարան: Ասվածը ՀՀ դատարանակազմության պայմաններում նշանակում է, որ անձն ունի օրենքի հիման վրա ստեղծված «առաջին ատյանի դատարանի» կողմից իր գործի քննության իրավունք և վերաքննիչ դատարանի կողմից՝ իր բողոքի հիման վրա առաջին ատյանի դատարանի կողմից կայացրած դատական ակտի վերանայման իրավունք, իսկ վճռաբեկ դատարանի կողմից՝ վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտի վերանայման իրավունք, այսինքն՝ որ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների գործունեությունը պայմանավորված է անձի՝ բողոքարկման իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ, որի որոշման համար հիմք են ընդունվում ոչ թե կոնկրետ գործի հատկանիշները, ինչպես առաջին ատյանի դատարանի դեպքում, այլ ստորադաս (առաջին ատյանի և վերաքննիչ) դատարանի կայացրած դատական ակտի օրինականության ու հիմնավորվածության ստուգման (վերանայման) գործառույթը: Ընդ որում, իրավասության հասկացության գործածմամբ նշվում է, որ վերաքննիչ ու վճռաբեկ դատարանները վերանայում են օրենքով նախատեսված դատական ակտերը բողոքի հիման վրա, իսկ արդեն այն, թե որ դատական ակտերի դեմ բողոքները կարող են ներկայացվել վերաքննիչ և վճռաբեկ դատարաններ, մասնավորեցվում է քրեական դատավարության օրենսգրքով:

Այսպես, Դատական օրենսգրքում, ելնելով վերանայման գործառույթից, սահմանված է, որ (1) վերաքննիչ դատարանն օրենքով սահմանված լիազորությունների սահմաններում վերանայում է առաջին ատյանի դատարանի՝ բողոքարկման ենթակա դատական ակտերը, իսկ (2) վճռաբեկ դատարանը, լինելով ՀՀ բարձրագույն դատական ատյանը, վերանայում է վերաքննիչ դատարանի, նաև օրենքով նախատեսված դեպքերում՝ իր կայացրած դատական ակտերը, իսկ արդեն քրեական դատավարության օրենսգրքով կոնկրետացվում են այն դատական ակտերը, որոնք կարող են բողոքարկվել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան: Օրինակ, Օրենսգրքի 376.1 հոդվածը թվարկում է այն դատական ակտերը, որոնց դեմ կարող է վերաքննիչ բողոք ներկայացվել և քննություն իրականացվել վերաքննիչ դատարանի կողմից, իսկ 403-րդ հոդվածում՝ վճռաբեկ դատարանի կողմից, հետևաբար ակնհայտ է, որ խոսքը ոչ թե վերաքննիչ և վճռաբեկ դատարաններին ընդդատյա գործերի մասին է, այլ այդ դատարանների կողմից իրականացվող գործառույթի և դրա շրջանակներում այդ դատարանների քննությանը ենթակա դատական ակտերի (պայմանականորեն ասած՝ խոսքը վերադաս դատարաններին ընդդատյա դատական ակտերի մասին է, այլ ոչ թե գործերի, իսկ այդ ակտերը կարող են լինել միևնույն գործի շրջանակներում կայացրած տարբեր հարցերի առնչությամբ): Այստեղից էլ հետևում է, որ «ընդ-

դատություն» հասկացությունը վերաբերելի է ոչ թե առաջին աստյանի դատարանին, այլ գործի քննությանն առաջին աստյանի կարգով, ինչը նշանակում է, որ եթե վերադաս որևէ դատարան գործը քննի առաջին աստյանի կարգով, այլ ոչ թե բողոքարկման հիմքով իրականացնի վերանայման վարույթ, ապա այն կարող է վերաբերելի լինել նաև վերադաս դատարանին²⁹: Այս գաղափարը, ըստ էության, ընկած է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հիմքում, սակայն հետևողականորեն չի զարգացել և արդյունքում ընդդատության ինստիտուտը վերաբերելի է դարձել նաև վերաքննիչ և վճռաբեկ դատարաններին: Վերաքննիչ և վճռաբեկ դատարանների ընդդատության մասին կարող էր խոսք լինել, եթե դրանք լինեին մի քանիսը, որոնք կունենային կոնկրետ դատական տարածքներ և անհրաժեշտություն կառաջանար լուծելու տարածքային ընդդատության հարցը նաև վերադաս դատարանների մասով, մինչդեռ նման հարց ներկայումս չի առաջանում, քանի որ դրանք եզակի դատարաններ են, որոնց իրավագործությունը (լատ. *jurisdictio*) տարածվում է ՀՀ ողջ տարածքի վրա (դատական տարածքը ՀՀ ողջ տարածքն է), և կոնկրետ գործը քննում ու լուծում են ոչ թե առաջին աստյանի կարգով, այլ վերանայման կարգով: Հենց դրանով պայմանավորված էլ Օրենսգրքի վերլուծությունից ուղղակիորեն հետևում է, որ ընդդատության խախտումը բացառապես առաջին աստյանի դատարանի կայացրած դատավճռի անվերապահ բեկանման հիմք է (ՀՀ քր. դատ. օր-ի 398 հոդված, մաս 3-րդ, կետ 11-րդ), իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից ընդդատությունը խախտելու մասին խոսք չկա և չի կարող լինել: Գործող իրավակարգավորումների պայմաններում վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից անմիջականորեն չի կարող թույլ տրվել ընդդատության խախտում. դա հնարավոր է բացառապես այն դեպքում, երբ չեն ուղղում առաջին աստյանի դատարանի կողմից թույլ տրված ընդդատության խախտումը: Մեր խորին համոզմամբ՝ վերաքննիչ և վճռաբեկ դատարանները կարող են խախտել զուտ իրավասության կանոնները՝ մասնավորապես քննության առնելով և լուծելով այն գործերը, որոնք նրանց ենթակա չեն, կամ եթե նրանք դուրս են եկել դատավարական օրենքով ուղղակիորեն նախատեսված լիազորությունների սահմաններից³⁰: Մեկ այլ փաստարկ է նաև այն, որ ընդդատության

²⁹ Վերադաս դատարանների ընդդատության մասին կարող էր խոսք լինել նաև այն դեպքում, եթե լինեին մի քանի վերադաս դատարաններ, որոնք կունենային կոնկրետ դատական տարածք, և անհրաժեշտություն կառաջանար լուծելու տարածքային ընդդատության հարցը նաև վերադաս դատարանների մասով, մինչդեռ նման խնդիր չի առաջանում, քանի որ ՀՀ-ում չկան վերադաս մի քանի դատարաններ:

³⁰ Վերոգրյալի համատեքստում մենք համաձայն չենք նաև տեսության մեջ արտահայտված այն մոտեցմանը, երբ օտարերկրյա պետության վերադաս դատարանի դատական ակտը ճանաչելու իրավասությունը ներկայացվում է որպես առարկայական ընդդատություն, քանի որ այդ հարցերի լուծումը, մեր կարծիքով, հիշյալ դատարանների իրավասության հարց է առարկայական դատական ենթակայության համատեքստում, այլ ոչ թե ընդդատության // տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (դատական և հատուկ վարույթներ), մաս 3, Եր., 2017, էջ 18:

մասին վեճերը ծագում են բացառապես առաջին ատյանի դատարանների միջև, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանները նման վեճերի չեն բախվում, այս դատարանները կարող են բախվել բացառապես իրավասության մասին վեճերի մասնավորապես այն համատեքստում, թե կոնկրետ հարցը որ դատարանի քննությանն է ենթակա. օրինակ, գործնականում հաճախ են հանդիպում դեպքեր նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով վարույթ հարուցելու կամ հիմնարար խախտման հիմքով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու, որի պարագայում խնդիր կա պարզելու, թե որ դատարանը պետք է քննության առնի այդ բողոքը և այլն:

Անդրադառնալով քրեական գործի հատկանիշների հիմքով ընդդատությունը որոշելու հարցի քննարկմանը՝ պետք է նկատել, որ այդ չափանիշին համապատասխանում է բացառապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում տրված՝ քրեական գործերի ընդդատության որոշման այն է՝ «հանցանքի կատարման տարածքի» հատկանիշը, քանի որ մնացած նորմերով կարգավորված են ընդդատության որոշման, կանոնները՝ կոլիզիաներով և առանձին իրավիճակներով պայմանավորված: Օրինակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է իրավիճակով պայմանավորված ընդդատության որոշման կանոնը (*այլ պետության տարածքում կատարված հանցանքի վերաբերյալ գործն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մեղադրյալի բնակության վերջին վայրը, իսկ եթե չի հաջողվել պարզել այն, ապա այն դատարանին, որի դատական տարածքում ավարտվել է քրեական գործով մինչդատական վարույթը*), իսկ 48-րդ հոդվածի 2-րդ մասում՝ կոլիզիաներով պայմանավորված կանոնը (*երկու կամ ավելի հանցագործությունների վերաբերյալ գործերն առաջին ատյանի տարբեր դատարաններին ընդդատյա լինելու դեպքում դրանք միացնելիս գործը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ավարտվել է տվյալ գործով մինչդատական վարույթը*) և այլն, և այլն³¹: Ընդ ո-

³¹ Նկատենք, որ տարածքային հատկանիշով է որոշվում նաև քրեական գործերից զատ այլ հարցերի ընդդատությունը, օրինակ՝ Օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները քննում է **վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարանը**, իսկ 437-րդ հոդվածը սահմանում է, որ դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերը լուծում է **դատական որոշում կայացրած դատարանը**, իսկ եթե դատական որոշումն ի կատար է ածվում որոշումը կայացրած դատարանի դատական տարածքից դուրս, ապա այդ հարցը լուծում է **տվյալ դատական տարածքի միևնույն ատյանի դատարանը**: Պատժի կատարման վայրի դատարանն է քննում և լուծում նաև հիվանդության կամ հաշմանդամության պատճառով պատիժը կրելուց ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցերը՝ անկախ այն բանից, թե որ դատարանն է կայացրել դատական որոշումը, մինչդեռ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատապարտ-

րում, ինչպես երևում է օրենսդրական կարգավորումներից, կոյիզիոն կարգավորումները և առանձին իրավիճակներով պայմանավորված ընդդատության որոշման կանոններն ինքնուրույն բովանդակություն չունեն, այլ ածանցվում են կա՛մ ընդդատության հիմնական հատկանիշից (*հանցանքի կատարման տարածք*), կա՛մ պայմանավորված են իրավիճակային (*այլ պետության տարածքում կատարված հանցագործություն, տարբեր դատարանների դատական տարածքներում կատարված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի միացում*) լուծման անհրաժեշտությամբ, որպեսզի որոշակիություն մտցնեն կոնկրետ գործը քննելու իրավունքն ու պարտականությունն ունեցող դատարանի որոշման հարցում:

Չանդրադառնալով այն հարցերի մանրամասն քննարկմանը, թե որքանով են իրավաչափ քրեական գործի ընդդատությունը որոշելու՝ օրենսգրքում ամրագրված հատկանիշները, քանի որ առաջադրած հարցի տեսանկյունից այն էական չէ, այստեղ փաստենք, որ վերոգրյալ վերլուծությունից պարզ դարձավ, որ «դատարանի իրավասությունը» և «ընդդատությունը» նույնական հասկացություններ չեն, դրանք տարբերվում են թե՛ հատկանիշներով, թե՛ բովանդակությամբ (ծավալով), թե՛ իրենց առջև դրված խնդիրներով, հետևաբար դրանք չպետք է նույնացվեն: Եթե **«դատարանի իրավասություն»** հասկացության միջոցով պետք է սահմանվի, թե եռաստիճան դատական համակարգի մեջ մտնող դատարանները (առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ) ինչ գործեր են քննելու և ինչ լիազորություններով են օժտված այդ գործերը քննելիս և լուծելիս, ապա «ընդդատություն» հասկացության միջոցով այն, թե կոնկրետ գործը կոնկրետ որ դատարանը պետք է քննի և լուծի, որպեսզի այն լինի օրինական դատարան:

Տրամաբանական մտածողության կանոնների տեսանկյունից՝ «դատարանի իրավասությունը» սեռային հասկացություն է, որը դատարանակազմական առումով ցույց է տալիս գործերի այն խումբը (կամ առարկայական դատական ենթակայությունը), որոնց քննությունը վերապահված է համապատասխան ատյանի դատարանին (առաջին, վերաքննիչ, վճռաբեկ), իսկ «ընդդատությունը» դատավարական և տեսակային³², որը ցույց է տալիս այդ խմբի մեջ մտնող կոնկրետ գործը քննելու իրավունքն ու պարտականությունն ունեցող դատարանը: Դատարանի իրավասությունն ու ընդդատությունը հարաբերակցվում են ինչպես ամբողջը և մասը. ընդդատությունը դատարանի իրավասության՝ որպես ամբողջի ընդամենը մի մասն է, դրա մի դրսևորումը: Հետե-

յալին դատավճռով նշանակված պատիժը կրելու համար ուղարկելու, դատապարտյալին, որի վերաբերմամբ դատավճռի կատարումը հետաձգվել է, պատժից ազատելու, ինչպես նաև դատավճռի կատարման այդպիսի հետաձգումը վերացնելու և դատապարտյալին ազատագրելու կրելու համար ուղարկելու, տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ հարցերը լուծվում են դատապարտյալի բնակության վայրի դատարանի որոշմամբ:

³² Մեռային և տեսակային հասկացության մասին տե՛ս **Գ. Ա. Բրտոյան**, նշվ. աշխ., էջ 87:

վաբար, եթե **դատարանի իրավասություն** հասկացության միջոցով սահմանվում է, որ բոլոր քրեական գործերը, մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված՝ օրենքով նախատեսված գործերը քննում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները (քրեական մասնագիտացում ունեցող դատավորները), իսկ վերադաս դատարանները (վերաքննիչ, վճռաբեկ) գործերը քննում են՝ ելնելով **վերանայման գործառույթից և ապահովելով անձի բողոքարկման իրավունքի իրացումը**, ապա **ընդդատություն հասկացության** միջոցով պետք է սահմանվի, թե կոնկրետ որ տարածքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում պետք է քննվի կոնկրետ քրեական գործը, մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված՝ օրենքով նախատեսված գործը (եթե այս հարցերը դիտարկենք ընդդատության տեսանկյունից), որպեսզի այն համապատասխանի «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» հայեցակարգին: Դրանով պայմանավորված՝ կարող ենք արձանագրել, որ «դատարանի իրավասությունը» և «ընդդատությունը» «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» հայեցակարգի բաղկացուցիչներն են և դատական իշխանության ու արդարադատության կազմակերպման հիմնախնդրի տարբեր կողմերը, ինչը նշանակում է, որ անընդունելի է դրանցից մեկի օգտագործումը մյուսի փոխարեն կամ մեկի (իրավասության) հատկանիշների միջոցով մյուսի (ընդդատության) սահմանումը տալը, ուստի դրանք պետք է հստակ տարբերակվեն և օրենսդրորեն ամրագրվեն: Ընդ որում, ինչն առավել կարևոր է, կոնկրետ դատարանի իրավասությունը որոշվում է վերացարկված կոնկրետ գործերից, իսկ ընդդատությունը կապված է կոնկրետ գործի հետ, որոշվում է կոնկրետ գործի հանգամանքներով պայմանավորված՝ իհարկե՝ ածանցվելով իրավասության կողմից նախապես սահմանված ընդհանուր չափանիշներից:

Ասվածի հիման վրա կարելի է պնդել, որ փաստորեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում «ընդդատության» ինստիտուտը կանոնակարգելիս օրենսդիրը թույլ է տվել մեթոդաբանական սխալ, որը հանգեցրել է այն բանին, որ թե՛ առաջին ատյանի դատարանի, թե՛ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների իրավասությունը ներկայացվել է որպես այդ դատարանների ընդդատություն, իսկ «ընդդատություն» հասկացությանը բնորոշ «հանցանքի կատարման տարածքի» հատկանիշը դիտվել է որպես տարածքային ընդդատության տեսակի որոշման հատկանիշ՝ դրա հետ միաժամանակ ընդդատության տեսակ սահմանելով գործերի կապվածության դեպքում ընդդատության որոշման կանոնը, այլ պետությունում հանցանք կատարած անձի գործը քննելու դեպքում ընդդատության՝ որոշման կանոնը և այլն, որոնք ոչ թե ընդդատության տեսակներ են, այլ ընդդատության հետ կապված կոլիզիաների լուծման կամ ի-

րավիճակով պայմանավորված ընդդատության որոշման կանոններ:

Լուծելով «դատարանի իրավասության» և «ընդդատության» հասկացությունների սահմանազատման և փոխհարաբերակցության հետ կապված մեթոդաբանական բնույթի հարցերը՝ կարող ենք դրա հիման վրա անդրադառնալ այդ ինստիտուտի իրավական կարգավորման հետ կապված առավել մասնավոր հարցերի, որոնք ուղղակիորեն հիմնվում են «ընդդատություն» հասկացության էության, հատկանիշների, դրա կողմից լուծվող խնդիրների վրա:

1) Նախևառաջ գտնում ենք, որ անհրաժեշտ է տալ «ընդդատություն» հասկացության նորմատիվ սահմանումը, որից հետո հստակեցնել ընդդատության հատկանիշները և ընդդատության վերաբերյալ ծագող կոլիզիաները և վեճերը լուծելու կանոնները, որոնք ներկայումս տարանջատված չեն և մի շարք հարցադրումների տեղիք են տալիս:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ընդդատությունը արտացոլում է բացառապես առաջին ատյանի դատարանի կողմից կոնկրետ գործը քննելու և լուծելու իրավասությունը՝ առաջարկում ենք «ընդդատություն» ասելով հասկանալ «օրենքով սահմանված քրեական գործի հատկանիշների համակցություն, որոնք որոշում են քրեական գործը կոնկրետ դատարանին վերապահված լինելը, որը լիազորված է այն քննելու առաջին ատյանի դատարանի կարգով»³³:

2) Անդրադառնալով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն և դատական ակտերի կատարման փուլում ծագող հարցերի լուծման վերաբերյալ որոշում կայացնելու համար օրինական դատարանի որոշման հետ կապված հարցերին՝ փաստենք, որ Օրենսգրքի համալիր վերլուծությունից պարզ է դառնում, որ այդ հարցերը ներկայումս կարգավորվում են ոչ թե «քրեական գործերի ընդդատության» ինստիտուտը կանոնակարգող ընդհանուր նորմերով, ինչպես փորձել է հիմնավորել ՀՀ վճռաբեկ դատարանը³⁴, այլ հատուկ նորմերով, ինչպիսիք են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը և դատական ակտերի կատարման փուլում ծագող հարցերը Օրենսգրքի 39-րդ և 49-րդ գլուխներում:

Այդուհանդերձ, նկատի ունենալով, որ մենք ելնում ենք այն հայեցակարգից, որ ընդդատությունը քրեադատավարական ինստիտուտ է, որը ներառում է ինչպես քրեական գործերով պատշաճ դատարանի որոշման կանոնները, այնպես էլ ցանկացած այլ հարցով պատշաճ դատարանի որոշման հարցերը, ուստի նաև գտնում ենք, որ մեթոդաբանական առումով իրավաչափ կլինի, եթե այլ հարցերի ընդդատության հետ կապված կանոնները ևս սահմանվեն Օրենսգրքի 6-րդ գլխում: Այս դեպ-

³³ Նկատենք, որ մեր առաջարկած բնորոշումը որոշ խմբագրական տարբերություններով համապատասխանում է Ա. Ուզրենինովայի կողմից առաջարկվող ընդդատություն հասկացության բնորոշմանը // տե՛ս **Узренинова А. М.** Подсудность в уголовном процессе: дисс. на соискание канд. юридич. наук., Екатеринбург, 2018, էջ 39):

³⁴ Տե՛ս և ՀՀ վճռաբեկ դատարանի 20-ի ԵԿԴ/0018/11/17 որոշումը:

քում անհրաժեշտ է նախևառաջ Օրենսգրքի 39-րդ և 49-րդ գլուխներում ամրագրված ընդդատությանը վերաբերող բոլոր նորմերը նույն բովանդակությամբ տեղափոխել 6-րդ գլուխ, այնուհետև քրեական գործերի ընդդատության վերաբերյալ կանոնները տարածել այլ հարցերի վրա:

Այս առաջարկությունը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի կարգավորումներով, որոնք սահմանում են, որ բովանդակությամբ համասեռ հոդվածները պետք է միավորվեն օրենսդրական ակտի նույն գլուխներում, որը, ըստ էության, օրենսդրական տեխնիկայի և օրենսդրության համակարգման կանոն է:

Բանալի բառեր – ընդդատություն, դատարանի իրավասություն, օրենքի հիման վրա ստեղծված դատարան, քրեական դատավարության օրենսգիրք

СЕРГЕЙ МАРАБЯН – Общая характеристика института подсудности и методологические вопросы его правового регулирования в уголовном судопроизводстве РА. – Статья посвящена методологии правового урегулирования одного из наиболее важных и одновременно проблемных вопросов теории и практики уголовного судопроизводства – института подсудности. Подсудность, являясь одним из критериев для определения «суда, созданного на основе закона», должным образом не урегулирована Уголовно-процессуальным кодексом РА. В одном случае понятие подсудности соответствует понятию компетенции суда, в другом случае – юридическому определению суда, что приводит к путанице методологического характера. В статье рассмотрена сущность каждого из понятий подсудности и компетенции, их взаимосвязь и разграничение, а также представлены конкретные предложения по урегулированию отдельных вопросов в Уголовно-процессуальном кодексе РА.

Ключевые слова: подсудность, компетенция суда, суд созданным на основании закона, уголовно-процессуальный кодекс

SERGEY MARABYAN – General Description of the Institute of Jurisdiction and Methodological Issues of its Legal Regulation in the RA Criminal Procedure. – One of the most important and problematic issues of the theory and practice of criminal procedure – the methodological issues of legal regulation of the institute of jurisdiction, are discussed in the article presented. Jurisdiction, being one of the criteria for determining “a court established by law,” is not properly regulated by the RA Code of Criminal Procedure. On one hand, the concept of jurisdiction corresponds to the concept of the competences of the court, in the other case refers to the legal definition of the court, and as a result leads to methodological problems. Based on the foregoing, the author discussed the essence of each of the concepts of jurisdiction and competence, their interrelation and delimitation, and suggested proposals to resolve highlighted issues in the RA Criminal Procedure Code.

Key words: Jurisdiction, competence of the court, court established by law, criminal procedure code